



ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Անվանումը՝ Կանանց ֆուտբոլի զարգացման ծրագիր

Նպատակը՝ տարբեր տարիքային խմբերում մարզային և հանրապետական մրցաշարերին մասնակցող թիմերի քանակի ավելացումը, ՀՀ տարածքում կանանց ֆուտբոլի հետագա զարգացման և մասսայականացման խթանումը, կանանց ֆուտբոլի նկատմամբ ընկալումների փոփոխությունը հասարակության մեջ:

Ծրագրի ժամկետները՝ 2020թ. հոկտեմբերից մինչև 2021թ. հուլիս

Դրամաշնորհին կարող են դիմել այն կազմակերպությունները, որոնք նպատակ ունեն զբաղվելու կանանց ֆուտբոլի զարգացմամբ Հայաստանի ողջ տարածքում:

ՀՖՖ-ի պարտականությունները՝

- Հաստատել 2020-2021թթ. աղջիկների մանկապատանեկան մրցումների կանոնակարգն ու խաղացանկերը,
- Իրականացնել մարզային առաջնությունների կազմակերպումը, ընդհանուր ղեկավարումն ու հսկողությունը,
- Իրականացնել դրամական միջոցների բաշխումը և հաստատում նախահաշիվով սահմանված ծախսերը, (տե՛ս Հավելված, դրամաշնորհի չափանիշները),
- Ապահովել Մ10, Մ12 և Մ14 տարիքային խմբերի մարզային և հանրապետական առաջնության մասնակից թիմերի ճանապարհածախսը,
- Մշտադիտարկել ծրագիրը շրջայցերի միջոցով:

Կազմակերպությունների պարտականությունները՝

- Մշակել և իրականացնել կանանց ֆուտբոլի զարգացման ծրագիր,
- Նշանակել ծրագրի համակարգման և ֆինանսական հաշվետվության համար պատասխանատու անձանց,
- Ներկայացնել մարզիչների պայմանագրերը և ինքնակեսագրությունները, ինչպես նաև տեղեկանք չդատվածության մասին,
- Ներկայացնել երեխաների անվտանգության համար պատասխանատու անձի ինքնակենսագրությունը (child safeguarding/focal point).
- Ներկայացնել բյուջե/նախահաշիվ ըստ ծախսերի ուղղվածության նախքան ծրագրի մեկնարկը,
- Ներկայացնել հաշվետվություն ծրագրի ավարտին (տարվա կտրվածքով ներկայացնել միջանկյալ և վերջնական հաշվետվություն):

Ծրագրի ներկայացման վերջնաժամկետները՝

- 2020թ. սեպտեմբերի 20՝ ծրագրի ու նախահաշվի ներկայացում:
- 2020թ. սեպտեմբերի 30՝ արդյունքների հրապարակում:

Հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք գրել womens@ffa.am
Էլ-հասցեին կամ զանգահարել +374 44 999442 հեռախոսահամարով:

Հավելված Դրամաշնորհի չափանիշները

1,500,000 ՀՀ դրամ

1. Մեկ թիմ Մ10, Մ12 կամ Մ 14 տարիքային խմբում, որը կմասնակցի մարզային առաջնությանը:
2. Մարզահագուստ (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ գուլպաներ):
3. Մարզչի աշխատավարձ:
4. 10 գնդակ և այլ մարզագույք (կոն, ժիլետ և այլն):

3,000,000 ՀՀ դրամ

1. Մեկական թիմ Մ10 և Մ12 տարիքային խմբերում, որոնք կմասնակցեն մարզային առաջնությանը:
2. Մարզահագուստ (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ, գուլպաներ) երկու թիմի համար:
3. Մարզչի աշխատավարձ:
5. 20 գնդակ և այլ մարզագույք (կոն, ժիլետ և այլն):

5,000,000 ՀՀ դրամ

1. Մեկական թիմ Մ10, Մ12 և Մ14 տարիքային խմբերում, որոնք կմասնակցեն մարզային առաջնությանը:
2. Մարզահագուստ (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ, գուլպաներ) երեք թիմի համար:
3. Մարզչի աշխատավարձ:
4. 30 գնդակ և այլ մարզագույք (կոն, ժիլետ և այլն):

2,500,000 ՀՀ դրամ

1. Մեկ թիմ ՀՖՖ կանանց ֆուտբոլի առաջնության Բարձրագույն կամ Առաջին խմբում:
2. Մեկ թիմ Մ10, Մ12 կամ Մ14 տարիքային խմբում, որը կմասնակցի մարզային առաջնությանը:
3. Մարզահագուստ 2 թիմի համար (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ, գուլպաներ, սպորտային հագուստ, խաղակոշիկ):
4. Կին մարզչի ներգրավվածություն:
5. Մ10, Մ12 կամ Մ14 տարիքային խմբի թիմի մարզչի աշխատավարձ:
6. 10 գնդակ:

5,000,000 ՀՀ դրամ

1. Մեկ թիմ ՀՖՖ կանանց ֆուտբոլի առաջնության Բարձրագույն կամ Առաջին խմբում:
2. Մեկական թիմ երկու տարիքային խմբում (Մ10, Մ12 կամ Մ14), որոնք կմասնակցեն մարզային առաջնությանը:
3. Մարզահագուստ 3 թիմի համար (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ, գուլպաներ, սպորտային հագուստ, խաղակոշիկ):
4. Կին մարզչի ներգրավվածություն:
5. Մ10, Մ12 կամ Մ14 տարիքային խմբերում 2 թիմի մարզիչների աշխատավարձ:
6. 20 գնդակ և այլ մարզագույք (կոն, ժիլետ և այլն):

7,500,000 ՀՀ դրամ

1. Մեկ թիմ ՀՖՖ կանանց ֆուտբոլի առաջնության Բարձրագույն կամ Առաջին խմբում:
2. Մեկական թիմ Մ12 և Մ 14 տարիքային խմբերում, որոնք կմասնակցեն մարզային առաջնությանը:
3. Մարզահագուստ 3 թիմի համար (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ գուլպաներ, սպորտային հագուստ, խաղակոշիկ):
4. Կին մարզչի ներգրավվածություն:
5. Մ12 և Մ 14 տարիքային խմբերի թիմերի մարզիչների աշխատավարձ:
6. 40 գնդակ և այլ մարզագույք (կոն, ժիլետ և այլն):
7. Կանանց թիմի մասին պարբերաբար հրապարակել նյութեր ակումբի սոցիալական էջերում:

10,000,000 ՀՀ դրամ

1. Մեկ թիմ ՀՖՖ կանանց ֆուտբոլի առաջնության Բարձրագույն կամ Առաջին խմբում: Բարձրագույն խմբում պարտադիր է 20, իսկ Առաջին խմբում՝ 25 խաղացողի հայտավորումը:
2. Մեկական թիմ Մ10, Մ12 և Մ14 տարիքային խմբում, որոնք կմասնակցեն մարզային առաջնությանը:
3. Մարզահագուստ 4 թիմի համար (մարզաշապիկ, կիսավարտիք, սրունքակալ, գուլպաներ, սպորտային հագուստ, խաղակոշիկ):
4. Մ10, Մ12 և Մ14 տարիքային խմբերի թիմերի մարզիչների աշխատավարձ:
5. 60 գնդակ և այլ մարզագույք (կոն, ժիլետ և այլն):
6. Կանանց թիմի մասին պարբերաբար հրապարակել նյութեր ակումբի սոցիալական էջերում: